ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂՍՊԱՂՅԱՆԻՆ «Մ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՀԱՐԱՉԱՏ ՉԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂՍՊԱՂԵԱՆ

Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ եւ գոհունակութեամբ անդրադառնում շնորհաշատ ու բազմավաստակ հոգեւորականիդ ազգօգուտ ու եկեղեցաշէն երկարամեայ գործունէութեանը:

Սիրելի Սրբազան,

Աւելի քան չորս տասնամեակ առաջ Ձեր ձեռքն առաք հովուական գաւազանը եւ «զհետ երթալ բարեաց» ու «ծառայել Աստուծոյ» պատուիրանին ականջալուր քահանայագործելու ելաք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու լուսապայծառ անդաստանում՝ Ձեզ առաջնորդ ու ապաւէն ունենալով հաւատն առ Աստուած եւ ծառայութեան նուիրումն ու սէրը հանդէպ հարազատ մեր ժողովուրդը:

Հովուական Ձեր առաքելութիւնը Դուք սկսեցիք Ժնեւի Սուրբ Յակոբ եկեղեցուց, այնուհետեւ ընտրուեցիք Անգլիոյ հայոց առաջնորդ եւ Երջանկայիշատակ Վազգէն Ա Ամենայն Հայոց Հայրապետի ձեռամբ արժանացաք Եպիսկոպոսութեան Սուրբ Օծման՝ որպէս նուիրեալ ու բարի ծառայ հաւատաւոր մեր ժողովրդի:

Արդիւնաշատ է Ձեր վաստակն առաւելաբար Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Շուրջ քսան տարիներ ծառայեցիք որպէս Մայր Աթոռի դիւանապետ, Գերագոյն Հոգեւոր Խորհրդի անդամ, Հոգեւոր Ճեմարանի վերատեսուչ, մեր Եկեղեցին ներկայացրեցիք բազմաթիւ միջեկեղեցական խորհրդաժողովներում, ընտրուեցիք Կաթողիկոսական Տեղապահ եւ այժմ էլ շարունակում էք Ձեր փորձառութիւնն ու կարողութիւնները ներդնել Մայր Աթոռի հրատարակչական գործունէութեան արդիւնաւոր իրականացմանը:

Երկարամեայ Ձեր աշխատանքի շնորհիւ այսօր նաեւ ընթերցողի սեղանի վրայ են Ձեր քարոզչական հոդուածներն ու հեղինակած բանաստեղծական ժողովածուները, որոնք հաւատացեալ հայորդեաց հոգիներում սերմանում են սէր հանդէպ Հայ Եկեղեցին եւ հոգեւոր մեր սրբազան արժէքները, հանդէպ Հայրենի մեր երկիրը՝ իր սրբացած հողով եւ Լուսոյ Խորան Սուրբ Էջմիածնով:

Ձեր գործունէութեան պսակը, անշուշտ, Կոտայքի թեմի Թեղենիք գիւղում կառուցուած Սրբոց Նահատակաց եկեղեցին է, որն այս տարի աստուածապարգեւ մեր հողին հառնեց Ձեր տեսիլքով ու նախաձեռնութեամբ: Այսուհետ նաեւ Ձեզ համար է «Երանի եկեղեցի շինողաց» աղօթքը, որ դարեր շարունակ առ Աստուած է բարձրանում հայորդեաց շնորհակալ ու երախտագէտ հոգիներից:

Միրելի Սրբազան, բարձր գնահատելով տարիների Ձեր վաստակն ու ծառայութիւնները աստուածասէր մեր ժողովրդին, Հայրապետական այսու Սրբատառ Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն է, որ Բարին Աստուած հաւատոյ մեր հայր Սուրբ Գրիգոր Լուսաւորչի բարեխօսութեամբ պարգեւի Ձեզ քաջառողջութիւն եւ անսպառ կորով ու եռանդ, որպէսզի Դուք շարունակէք Ձեր առաքելութիւնը՝ ի փառս Տիրոջ Սուրբ Անուան եւ ի պայծառութիւն Առաքելական Մեր Սուրբ Եկեղեցու:

«Զօրացարուք Տերամբ եւ կարողութեամբ զօրութեան Նորա» (Եփես. Զ 11) եւ «զիտասջիք թէ իւրաքանչիւր ոք որ զինչ առնէ զբարին, զնոյն ընդունի եւ ի Տեառնէ» (Եփես. Զ 8):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 5-ն Յուլիսի
յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 199